

26

#-30







26 ամ 1686-ԿԳ
Հ-30 Վ Ե Ր Ա Զ
ՍԻՐԳ ԱԴՐԵՍԻ ՕՐԻՆ
ՀԵՄՐԵՐ
ՄԵՐ ՓՐԻՒՉ ՅԵԱԼՈՒ
ՎՐԴԱՏԱՐ ԶԵՐՉԵՐ
ՆԵՐ ԵԿ ՄԵՀԱԽԵՆ
ԱԵՐԵՅ

Բ-ս բ գ հ ա ն ո ւ թ է լ ո ւ



Հայրապետութե Տի ՅԱԱ-
ՀԱՆԱՆԵԱՆ Կարբեցուց
սրբազնասուրբ Կաթողի-
կոսի ամենայն Հայոց

Հրամանաւ Տեառ ԲԵՐԱԾ-
ԱՎ. ԲԵՐ իշխանազնի ջալա-
լեան սրբազն Արք եպիսկո-
պոսի և մետրապոլիտի Հայ-
ոց համայն Աղուանից:

Պ Ե Ր Ա Զ
Յամի Տեառ 1835:

11497

Պրիստոսումն սիրեցած եղբարք
որովհետեւ Պրիստոս փրկեց մեզ
սատանայիցն և մեղքիցն և մահիցն
և յաւիսունական դատապարտութե-
նիցն՝ արժան չէ մեզ որ էս ժամա-
նակը բաց թողենք և առցկացնենք
առանց միտք անելոյ և մտածելոյ
էն հոգի ապրեցնօղ փրկութեան հա-
մար՝ որ մեր փրկիչ Յիսուս Պրիս-
տոսն հենց էս ժամանակումն իրան
անչափ գլխութենովն և ողորմութե-
նովն կատարեց մեզ մեղաւորիս և հենց
իրան մահաբեր թշնամիքներին հա-
մար: Պատճառն որ՝ եթէ մին մահ-
կանացու մարդ հասարակաց օդակի
համար մին բարի գործ գործած լի-
նի, և իրան բարեգործութեան հա-
մար արժանացած լինի հասարակաց
գոհութեանն և շնորհակալութեանն

ապա ուլեմն էլ Ռոբան, աւելի հարկաւոր և պատշաճ՝ է մեզ ամենիս որ յիշենք Քրիստոսի մահուան պատուական և փրկութիւն տուօղ գործըն. որ նորանով մեզ համար իբր մեծ գնով հաստատ քաւութիւն և մեր մեղաց թողթւթիւն դնեց (պատրիարքեց) որ նորանով էլ Երկնաւոր հօրըն մեզ համար էնսիէս հայր շենեց, մինչեւ որ նա համարումի մեզ ինչպէս իրան սիրելի որդիք և Երկնքի արքայաթեանն Ճշմարիտ ժառանդ ընկերներ իրան միածին որդի Քրիստոսին հետ։ Եւ իրաւի Քրիստոսի սէլն և շնորհքն մեզ վերայ Էնքան, մեծ էլաւ, մինչեւ որ ինքըն իրան կամքովն մերկացաւ իրան շատ զարմանաւի և աստուածոյին փառքիցն, որ հօր հետ հաճասար վայելում, ը Երկնքումն. և վէր եկաւ Էս ողորմելի աշխարհքս՝ և մեզ նման մահկանացու մարդ էլաւ և անարդծառայի կերպարանք հագաւ՝ հենց սրա համար որ մեզ փրկէ և մեր հոգիները Երկնային փառքովն զարդարէ

հենց մեղ մեղաւորներիս եմ ասում։
որ անհաշտ թշնամի էինք նորան և
թողել էինք նորա սուրբ օրէնքըն և
պատուիրանքներըն և հետեւ էինք
մեր ապականված քնութեան չար
ցանկութիւններին և մեղաւոր հեշ-
տութիւններին ։ Ի՞այց էս ամէնիս վե-
րայ Վրիստոս մեր անարժանու-
թիւնըն ըլյեշեց՝ և իրան ան-
ձըն ինչպէս հաշտութեան միջնորդ
դրաւ Աստուծոյ արդար բարկու-
թեան և մեր քացախուտ մեղքերի
մէջն և էն պարտքի ձեռագիրըն պա-
տաւեց՝ որ մենք նորանով պարտա-
կան էինք առաջի աստուծոյ. և մեր
պարտքերըն վճարեց։ (աւան Լոռիս. Շ.)
Այս պարտքըն էնքան ծանրացրել էր
մեր ուսերի վերայ. մինչեւ որ՝ անհը-
նարին էր մեղ էն ծանրութենիցն
թեթևանալ ։ Եւ առանց մեր պարտ-
քերըն հատուցանելոյ՝ անկարելի էր
մեղ հենց մեր անձին զօրութենովն
էս պարտքերի ծանր բեռնիցն ա-
զատովիլ և հօր Աստուծոյ հետ հաշտ-
վիլ Արա համար էլ մեր նեղու-

թիւնն Քարիստոսի անչափ ողորմու-
թիւնըն շարժեց որ տէլն ծառայ-
ին էն պարտքի կապաճքներիցն ա-
զատեց։

Ապա ուրեմն՝ հիմիկ որ մարդ կը-
լինի որ միտք անէ մեղաց անտաճնե-
լի պարտքերին համար՝ որ իսկի ոչ
էնչ կարօղ չել հատուցանել բայց
մէնակ անմեզ Քարիստոսի մահն՝ և
սրտի մտօք մեղաց դործքերըն չատել
Եթէ մեղքն էնքան աւելի է Աս-
տուծոյ՝ մինչեւ որ աստուած ոչ մարդ
և ոչ հրեշտակ բաւական համարեց
մեր փրկութեան և մեղաց թողու-
թեան համար բայց մէնակ իդան
միածին և սիրելի որդոյ մահըն
ապա ուրեմն որ մարդ է որ վախե-
նալով չը դողայ էն մեղքի կապաճք-
ներիցն ։ Եթէ մենք՝ իմ սիրելի բա-
րեկամներս մոքով էս մտածենք, որ
էս անմեզ գառն հեսց մեր մեղաց
համար մահի մլջ վարվեցու էլ ա-
մելի լաց լինելց և սուդ ամելց
արժանի պիտի համարենք մեղ՝ որ
նորա մահին պատճառ էլանք, քան

թէ աղաղակ բարձրացնենք էն հը-
 րէաների նախանձուն և ողորմու-
 թեան համար՝ որ մահի մէջ մատ-
 նեցին նորան, Անք անիլաւ գործ
 գործեցինք, որ նրա համար մեր փըր-
 կիչ չարչարվեցաւ՝ խոցվեցաւ. բայց
 հըրէաներն մէնակ մեր անիրաւութեան
 պոշտօնեանեց էլան: Ապա ուրեմն
 պէտք է մեզ որ մոքով վէր գանք
 մեր սրտերի մէջն և ծածուկ լաց
 լին ինք մեր կենաց խեղճութեան և
 մեշքով պատաժ վարքին համար
 թռող Ճշմարտապէս իմանանք, որ ե-
 թէ Աստուծոյ ամէնից պատուական
 և սիրել որդին էսպէս մահապարտ
 գտվաւ և խոցերըն իրան վերայ ա-
 ռաւ էն մեղքերին համար՝ որ ինքն
 խկի չէր գործեց ապա ուրեմն մենք
 որքան աւելի արժանի ենք պատժա-
 պարտութեան, և չարչարանաց էն
 շատ և ամէն օր գործած մեղքերին
 համար՝ որ միշտ առանց վախենալոյ
 Աստուծոյ կամաց դէմ գործեցինք,
 թէ որ սրտով մեր յանցանքներին
 վէրայ չըդու ջանանք և մեր անօդէ-

Նութիւններին համար ցաւ չը'քա-
 շենք, Այսըելի չէ որ մին մարդ մեղ-
 քըն սիրէ՝ որ Աստուծոց էնքան ա-
 տեց, և աստուծոց առաջին շնորհք
 դանէ: Ոչ ովէ կարօղ չէ ասել
 թէ՝ բոլոր սրտով սիրումէ Քրիս-
 տոսին, և սրտով բարեկամ և ըն-
 տարի լինիլ նորա մեծ Ծնամոյն
 պյսինքն, մեղքին՝ որ նորա մահին
 պատճառ էլաւ: Ինքան մենք սիրու-
 մենք չիսասք բիստոսին որբան աստու-
 մենք մեղքին: Այս համար պէտք է
 մեղ շատ զգուշ լինել որ սրտերըս
 մեղքին չըտանք, և նորանով աստու-
 ծոց Ծնամի և Քրիստոսին մատնօղ
 լինիք: Պատճառն որ՝ ոչ միոյն նո-
 րանք որ Քրիստոսին խաչ հանեցին
 նորա չարչարօդներն և խաչ հանօղ-
 ներն են, բայց սուրբ պօղոսի ասա-
 ծին պէս. (պէս ԵՀՅ. 7.) Էն ամենքն
 որ մեղք և անօրէնութիւն են գոր-
 ծում Աստուծոց որդոյն մին էլ իրանց
 համար խաչ են հանում և մին էլ
 խայտառակում. պատճառն որ՝ հենց
 մարդկանց մեղքն և անօրէնութիւնն

էր որ նորանով Վրիտոս չաբաչար
մահի մեջ մասնը լւցաւ Եթէ մեղքի
պաշարն մահ է և յաւխտենական մահ.
ապա իրաւի մեղ համար շատ ահաւոք
բան է մեղքին ծառայութիւն անելու

թահ որ մարմնայ պէս և նորա մեղ-
քով պատաժ ցանկութիւններին պէս
ապրինք, ուղորդ որ կը մեռնինք, ինչ-
պէս որ ամենակարօղ Աստուածն ահ
է տալիս մեղ սուրբ Պաղոսի ձեռողին:
(Պէս Հոգոն. ը.) Կարելի չէ մեղ որ
իսկի մին ժամանակ կենդանի լի-
նինք Աստուծոյն, բայց մինակ մեռ-
ուեալ լինելով մեղքին և հրաժար-
վելով նորանից Եթէ Վրիտոս մե-
ղահում է, ապա մարմինն մեռած է
մեղքին համար և հոգին կենդանի
է արդարութեան համար:

Եթէ նորա հոգին՝ որ Վրիտո-
սին յարոյց մեռելուրի միջիցն՝ մեղա-
հում բնակված է, աղա նա որ ՀՅե-
սուս Վրիտոսին յարոյց մեռելուրի
միջիցն՝ մեր մահկանացու մարմին-
ներս կը կէնդանացնէ էն իրան հո-
գողն որ մեղահում բնակված է:

Ռայց թէ որ մահն մեղ վերայ տի-
 լումէ և թագաւորութիւն անում:
 էն ժամանակին Աստուածն՝ ամէն
 շնորհաց և սրբութեան աղբիւրն մե-
 զանից կը հեռանայ. և սատանան և
 նորս չաք հոգին մեղ վերայ կը տիրէ և
 թագաւորութիւն կանէ: Ես իրաւի
 եթէ էսպէսի ողորմելի վիճակի մէջ
 մեռնինք, յաւիտենական կեանքըն
 չենք ժառանդիլ բայց անվերջ և
 անվախճան մահի և դատապարտու-
 թեան մէջ կընկնինք: Պատճառն որ՝
 «Քրիստոս չը' փրկեց մեղ մեղքեցն»
 որ մին էլ առանց վախենալոյ հենց
 էն մեղքի մէջ յետ դառնա՞ք, բայց
 փրկեց մեղ որ մենք մեղքի ցանկու-
 թիւններըն դուրս քցենք, և արդա-
 րութեան և անարտատութեան կեանքի
 մէջ ապրինք: Երաւի Աստուած կա-
 մեցաւ որ մեր մկրտութենումն սրբէ
 մեղ մեղքի կեղաստութենիցն և պըղ-
 ծութենիցն, որ նորանից ետև մա-
 քուր և անարտ կեանքի մէջ ապ-
 րինք: Են մկրտութենումն խոստա-
 ցանք Աստուածոյ առաջին՝ որ սատա-

նայիցն և նորա ամեն խորհուրդներիցն հրաժարվ ինք։ Խոստացանք որ հնաղանդ որդիք լինինք միշտ աստուծոյ կամքին և պատուիրանքներին հետևելով լապա ուրեմն թէ որ Աստուած Ճշմարտութենով է մեր հոյը։ Թող իրան արժանաւոր պատիւըն տանք նորան եթէ մենք աստուծոյ որդիք ենք, ապա թող մեր որդիական հնաղանդութիւնըն ցոյց տանք նորան, ինչպէս որ Քրիստոս յայտնապէս խոստովան լինելով իրան հնաղանդութիւնըն ցոյց տուաւ հօրնու պատճառն որ՝ սուրբ պօղոսի վկայելոյն պէս, իրան անձըն խոնարհացրուց և հնաղանդ էլաւ մինչև ՚ի մահ և էլ խաչի մահն։ (պէտ Փէլէպ. թ.) Եւ էս ամենըս նա արաւ մեղ հաւատացեալներիս համար։ ՚Իս իսկի ինքն իրան համար չի պատրժվեցաւ. ինչու որ՝ նա իսպառ սուրբ և անարատ էր ամեն մեղքերիցն Ռայց նա մեր մեղքերին համաց խոցվեցաւ, ասումէ եսային, և մեր անօքենութիւններին համար պատըժ-

վեցաւ. Նա մեր մեղագ պատիժն քա-
շեց՝ մեղ մահի ահիսյն փրկելոյ հա-
մար. Նա մեր հիւանդութիւններըն
վերացրուց և մեր ցաներն վէր կա-
լաւ հենց էն եսոյի մարդարեի ասա-
ծին պէս: (ՔԷԱ ԵՀԱՅ. ԾԳ:) «Ես ա-
մոն ցաւերից և չարչարանքներից
իսկի յետ չի քաշվեցաւ: որ մեղ յա-
ւիտենական տաննջանքիցն փրկէ: » Ես
հաւան կացաւ որ մեղ համար էսպէս
չարչարվի. [Ե] և մենք չեինք ար-
ժանի:

Արա համար որքան որ մեղ պար-
տական ենք տեսնում նորան, էնքան էլ
աւելի պէտք է որ շնորհակաէ լի-
նինք նորանից. և իրաւի պէտք է մեղ
էլ աւելի յոյս ունենալ որ նորա ձե-
ռիցն ամէն ուրիշ բարի բաներ ըս-
տանանք, որովհետեւ հենց իրան միա-
ծին որդին պարզ և ընծայ ստա-
ցանք մեղ, ոչ թէ մեր արժանաւո-
րութենովն այլ մէնակ նորա անասե-
թի քաղցրութենովն:

Պատճառն որ՝ եթէ աստուած
պօղոս առաքելոյ ասածին պէս, իրան

որդոյն էւ չը՝ խնայեց՝ այլ մեղ ամե-
նիս համար մասնեց նորան. ի՞նչ չպէս
նորա հետ ամեն բան չի շնորհիւ
մելը (աշա. Հուօձ. Ե) Ամեն ինչ բան
որ մեր հոգոյ և մարմնոյ համար
պէտք է լինի մելը կարօղ ենք ար-
ժանաւոր կերպով և կամարձակու-
թենով մօտենալ դեպի մեր ողորմած
հայրն, և նորանից խոդը լամեն մեղ
հարկաւոր բաներըն. և նա կըտայ
մեշ ինչպէս կարօտութիւն քաշող որ-
դոցն: Պատճառն որ՝ իշխանութիւն
տուաւ մեշ որ աստուծոյ որդիք լի-
նինք, որ հաւատումենք ՀՅւսուսի ա-
նունին: (աշա. ՀՅօհ. թի:)

Խնչ որ նորա անունովն Աստուած
հօրիցն խոդը ենք, կըտայ մեզ: Խնչու
որ՝ ամենակարօղ Աստուածն իրան
Քրիստոս որդոյն ենքան հաւանել է,
որ նորա սիրոյն համար ընծայումէ
մեղ իրան շնորհքներըն և իսկի չի
հանիւ մեշ իրան երեսիցն: Խրան
որդոյ մահի պատարագն ենքան հա-
ճելի և ընդունելի էլաւ նորան՝
որ հենց ինքն որդին եսպէս խոնար-

Հութենով և ահմեղութեասվքաշեց՝
մինչե որ էն իբր մի միայն և կա-
տարեալ քաւութիւն համարեց աշ-
խարհքի ամեն մեղաց համար Ահա
որդին իրան մահովն մեղ համար երկ-
ուաւոր հօրիցն էնպէսի շնորհք ստա-
ցաւ, մինչե որ նորա մահի պառողնե-
րովն թէ ձշմարիտ Քրիստոնեայ լի-
նինք, և ոչ մէնակ անունով, հիմիկ
ստուծոյ շնորհաց լիութիւնըն ստա-
ցանք, և էլ մեր մեղաց ծանրութե-
նիցն աղատված լինինք:

Խրաւի իսկի մին լեզու կարօղ չէ
էնպէսի պատուական մահի արժանա-
ւորութիւն ցոյց տալ Պատճառն որ՝
սորանում է միշտ բնակվում մեր ա-
մէն օր գործած մեղքի թողութիւնն
սորանում է հանգչում մեր արդարու-
թեան յօյսն սրանից ենք ընդունում
և սրանով իբր մեծ գնով առնեմենք
մեր հոգոյ յաւիտենական առօղջու-
թիւնըն Ա՛ ուրիշ բանով փրկու-
թիւն չըկայ երկնքի Ներքեն մարդ-
կանց տրվված՝ որ նորանով կարելի
լինի մեղ ապրիլ բայց միայն Քը-

ըիստոսի մարմնոյ էս պատուական պա-
 տարադն՝ որ խաչի սեղանին վերայ
 պատարագվեցաւ (տէս. Պարծ. 7.)
 Աշ իրաւի որ մին մահկանացու մար-
 դոյ գործն՝ թէ և շատ սուրբ լինի
 կարօղ չե որ արժանաւորաւ թենով
 հաճասարսլի Քրիստոսի էս ամէնա-
 սուրբ գործոյն հետո Պատճառն որ՝
 յայտնի է թէ մեր ամէն խորհուրդ-
 ներն և գործքերն անօգուտ և անար-
 ժան կը լինէին, թէ որ Քրիստոսի
 մահի արժանաւորութենովն ընդու-
 նելի չը լինին. Առեք արդարութիւ-
 նըն շատ տկար և պակաս է՝ եթէ
 Քրիստոսի արդարութեան հետ հա-
 մեմատվի. պատճառն որ՝ նորա ա-
 րարմունքի և գործքերի մէջն խկի
 մին մեղաւոր սխալմունք կամ պակա-
 սութեան նշան չը կար. Աշ որս
 համար Քրիստոսի գործքերն բաւա-
 կան և արժան էլան որ մեր անօրե-
 նութիւններն և մեղքերըն քաւեն
 և մեր պակասութիւնըն վճարեն. ո-
 րովհետեւ մեր արարմունքն և գործ-
 քերն լցված են պակասութենով և

տկարութենով և ինքն իրանցով ան-
արժան են ամենակարօղ Աստուծոյ
մեծ շնորհքին, ել աւելի էն փառ-
քին՝ որ մենակ Քրիստոսի արժանա-
ւորութեանց և գործքերին արժանի
է. պատճառն որ՝ դաշիթ մարգարէն
ասումէ, մեզ չէ Տէր՝ մեզ չէ. բայց
քո անունիդ փառք տուր: (Պէս. Առաջ.
Ճժկ.)

Ապա ուրեմն սիրելի բարեկամնե-
րը՝ եկէք ՚ի միասին ամեն խոնարհու-
թենով փառք տանք նորա առանին.
օրհնենք և գովենք նորան յաւիտեան:
Պատճառն որ՝ նա ցոյց տուաւ մեզ
իրան անսահման ողորմութիւնըն. նա
յօժար կամքով ինքն իրանով և մեծ
զին տալով գնեց մեր հոգոյ փրկու-
թիւնըն:

“Եա չը խնայեց իրան անձին, նա ի-
րան հրեշտակին բաւական չը՛հա-
մարեց էս զարմանալի գործըս կա-
տարելոյ համար, բայց ինքն իրան
անձըն տուաւ մարդկանց փրկութիւ-
նըն գործելոյ համար: (Պէս Առ. առ.)
Ինքն կամեցաւ էն փրկութիւնըն կա-

տարել, որ գործն ամէնից շահաւոր
 լինի և փրկութիւնն անհից կտ-
 տարեալ ։ Այս իրան երկար չարչա-
 րանքներում խելի չը յուսահատվեցաւ
 մարմնոյ էն անտանելի ցաւերովն՝ որ
 քաշեց. և չըզջացաւ բարի անել
 իրան թշնամիքսերեն Ռայցնան իրան
 սիրուն բաց արաւ մեղ համար, և
 իրան անձըն կատարեալ պատարագ
 և մատաղ մատոյց մեր փրկութեան
 համար Այրա համար եկէք հիմիկ՝
 որ մենք էլ մեր սրտերըս բանանք
 նորա համար և մեր բուլոր կեանքի
 մէջ ջանք անենք՝ որ շնորհակալ
 լինինք էսպէսի պատուական Տէրիցն
 և միշտ հարա անպատմելի շնորհաց
 յիշատակըն մոքի մէջ պահենք. և
 ոչ մէնակ էսչափ՝ բայց մեր խաչըն
 էլ մեր տաերի վերայ դնենք և քրիս-
 տոսի ետեկն մանգանք:

“Այրա չարչարանքն ոչ մէնակ
 փրկութիւն և մեր մեղաց կատարեալ
 քաւութիւն է, բայց էլ ամէնից կա-
 տարեալ օրինակ է տմէն համբերու-
 թեան և չարչարանքի համար Պատ-

1008
354

Ճառն որ՝ Եթէ ՚Յըիստոսին պատ-
 շաճ երևեցաւ էսպէսի չարչարանք-
 ներով չարչարվիլ և ապա իրան հօր
 փառաց մշջ մտնել ապա ինչու մեղ
 ամենիս պատշաճ չի լինիլ որ էս
 դառն ժամանակիս քիչ ցաւերըն և
 էս աշխարհ քիս նեղութիւններըն
 համբերութենով քաշենք։ Պատճառն
 որ՝ իբաւի սուրբ պետրոս առաքեալն
 վկայութէ, թէ ՚Յըիստոս մեղ հա-
 մար մեռաւ և մեղ օրինակ թողեց՝
 որ մենք նորա գնացքի ետեկն զը-
 նանք (աւա. աւ Ալեք. Բ.) Եւ թէ
 որ մենք նորա հետ չարչարանքի ըն-
 կեր լինինք, հաստատ որ նորա հետ
 էլ երկնքումն կը թագաւորենք։ (աւա.
 Բ. Տիմ. Բ. Հայոն. Ե) Ոչ թէ նորա
 համար իբր թէ էս անցաւոք կենաց
 չարչարանքն արժանի լինի էն նոր
 գայու կենաց փառքին, բայց նորա
 համար պէտք է ուրախութենով մեր
 անձները չարչարանքին մշջ տանք,
 որ մեր կեանքի մշջն նմանող լինինք
 ՚Յըիստոսին և էսպէս մեր գործքե-
 րովն փառաւորենք մեր հօրըն որ

Երկնքումն է։ (Պէս. Առարթ. Եւ) Այս ինչպէս դառն և դժուար է էս կեանքիս նեղութիւններումն և տրտամութիւններումն քրիստոսի խաչն վէր առնել, էնպէս էլ հեց էն խաչն յուսոյ ուրախաճալի պտուղըն է բերում՝ էն ամինին համար որ սիրուլ տանձըն էն առնում նորան՝ որ Քրիստոսի անունին համար քաշեն։ (Պէս. Եշէ: Ժան) Ուստի նեղութիւնների ծանրութիւնըն էնքան չի մտածելք, որքան նեղութիւնների վարձքն՝ որ երկնքի արքայութենումն պիտի գանենք։ Այս ոչ մշնակ էսչափ, բայց էլ մեր ամին նեղութիւններումն ջանք անենք որ էն նեղութիւններին համբերերենք սրբութենուլ և անմեղութենով մեր փրկիչ Քրիստոսի օրինակին պէս։ Այսածառն որ՝ եթէ մեր գործած մեղքերին համար նեղութիւնն եցաւ քաշենք՝ էն համբերութեան գործն կատարեալ չէ մեր սրտերի մէջն բայց եթէ նահախ տեղն կեանքի ապրանքի կորուստըն քաշենք և նահախ տեղն ուրիշների բամբա-

սանքներըն մեր անձներիս վերայ դը...
ներք կետենք ՚Քրիստոսի սիրոյ հա-
մար ապա նեղութիւններն հաճելի
և ընդունելի կը լինին ՚Ստուծոյ ա-
ռաջին. (Թէս. առ. Պիշտ. առ.) պատճառն
որ՝ էսպէս էլ փրկիչն նահախ տեղն
էլած նեղութիւններին և բամբա-
սանքներին համբերեց:

՚Եա որ մեղք չի արաւ, և նեն-
դութիւն չը դավաւ նորա բերանում.
որ երբ որ բամբասվումէր. ինքն նո-
րա տեղ չէր բամբասում: չարչար-
վումէր՝ և ուս չէր պահում. բայց
իրաւունքով դատօղի ձեռքն էր յանձ-
նըվում:

՚Կատարեալ համբերութիւնն հոգս
չունի. թէ ի՞նչ նեղութիւն է քա-
շում. ոլլքան է քաշում. ումից է քա-
շում; բարեկամներից և կամ թշնա-
միքնե՞րից. բայց ջանք է անում որ էն
սմէն վերայ եկած նեղութիւններն
անմեղութենավ և նահախ տեղն քա-
շէ: ՚Հա իրաւի նա՝ որ կատարեալ
սէր և սղորմութիւն իրանում բնակ-
ված ունի նա իսկի մին ժամանակ

չի ուղում որ թշնամիքներին վլրեժ
 խնդրո: Թիւն ցցց տոյ. բայց նա կը-
 սիրե իրան թշնամիքներին. կօրհնե
 իրան անիծողներին. բարի կանե ի-
 րան առօղներին. և աղօթք կանե
 նորանց վերայ՝ որ իրան չարչարու-
 մեն և հալածում: (Պէս. Առաջ. Ե.)
 և էսպէս հետեօղ կըլինի մեր փրկիչ
 Քրիստոսի օրինակին՝ որ ամէն խո-
 նարհութեան և համբերութեան ա-
 մէնից կատաքեալ օրինակն է. պատ-
 ճառն որ՝ հա երբ որ խաչին վերայ
 քելեւուվեցաւ և շատ սաստիկ ցաւե-
 րով արիւնաթաթախ էլաւ իրան օրհ-
 նըլած մարմնոյ ամէն անդամներումն
 ըթէ և բայտնի ահարդված և խայտա-
 ռակված էր իրան հախանձոտ թշ-
 նամիքների և խաչ հանօղների առա-
 ջին. և թէ և ցաւերի և տանջանք-
 ների ալելքներս հորանուլ պատումէ-
 ին. և թէ և առհաւատ հրէաներն
 անամօթ ծաղրանքով խոցումին նո-
 րան առանց ողորմութեան, բայց նա
 իրան խաչ հանօղներին էնպէսի գր-
 թութիւն և սէլ ցոյց տուաւ, մինչեւ

որ՝ նորանց համար աղօթք տրաւ
դէզի երկնաւոր հայրն և ասաց. հայր
թողութիւն տուր դորանց. ինչու որ
չեն գիտում՝ [թէ ինչ են ահում:
(աշա. Պահ. Եղ. 34:)]

Ահա՝ որքան զարմանալի էր էն
համբերութիւնն որ նա իրան մատ-
նութեան սահաթումն ցոյց տուաւ,
եթի որ իրան առաքեալներից և ծա-
ռաներից մինչ որ իրան հաւատացել
էր նորան՝ անամօթութենով եկաւ
որ նորան մահի մէջ մատնէ իրան
թշնամիքներին ձեռքն Քրիստոս իս-
կի նորան մին նախատինք խօսք չի
ասաց. բայց միայն խնարհութեանը
հարցրուց նորան՝ [թէ ըսկեր՝ ինչու
համար եկիր դու:] (աշա. Ապահ. Եղ. 50:)

Խսպէս էլ մենք սիրելի եղբարք՝
պարտական ենք որ մեր մոքի խօնար-
հութեան և սիրոյ էս դարմանալի օրի-
նակը յիշենք՝ որ Քո իրանմարմնոյ
չարչարակներումն ցոյց տուաւ՝ [թէ
որ մենք նորա չարչարակներըն յիշել
նորանց օգորշն և պտուղներըն մեր
հոգոյ մէջ կամենանք ժողովել: Խս-

պէսի սէր և ողորմութիւն մենք էլ
 պէտք է իրաբ հետ ունենանք՝ թէ
 որ կամենամք Քրիստոսի ճշմարիտ
 ծառաներ լինել Խնչու որ՝ եթէ
 Քրիստոսի խօսքին պէս՝ մէնակ սի-
 րենք նորանց որ մեղ սիրումեն: ի՞նչ
 վարձք կը լինի մեղ չէ՞ որ մաքսա-
 ւորներն (էտ-ճշեւ+էնե՛ռ) էլ էնպէս
 են աշում: (աշ. Աշում. Շ.) Այնը
 սիրոյ գործքերումն մենք պէտք է ա-
 ւելի կատարեալ լինինք քան թէ
 մաքսաւորներն, ինչպէս որ մեր երկ-
 նաւոր հայրն էլ կատարեալ է: որ ե-
 րան արեգակըն ծագումէ չար և
 բարի մարդկանց վերայ. և անձրմ է
 ածում արդարներին և մեղաւորնե-
 րին վերայ. հեց էս օրինակիս պէս
 պէտք է մեղ էլ որ լինչպէս մեք սի-
 րելիներին և բարեկամներին՝ հեց
 էնպէս էլ օտարներին և թշնամիքնե-
 րին: որ հնազանդ օրդոց օրինակին
 պէս մեր երկնաւոր հօրն հնազան-
 դութենով հետեւինք: Այսաճառն որ՝
 եթէ նա իրան ահամըն խոնարհացը-
 րոց և հնաշանդ էլաւ մինչեւ ՚ի մահ

և խաչի մահին՝ որ հրեանելն խայտառակ մահ էին համարում՝ նորան, ապա մենք ինչու համար չեն խոնարհացնենք մեր ահաձերը Աստուծոյ առաջին համբերութեան և սիրոց փոքր գործքերի մէջն Ապա եկէք մենք ամէն մէջն իրան եղբօլն մեր սրտիցն Թողենք իրանց փոքր յանցանքներըն, ինչպէս որ աստուած քըրիստոսի սիրոց համար Թողել է մեզ մեր մեծամեծ մեղքերըն:

Խրաւի արժան չէ մեզ որ աստուածանից մեր մեծամեծ մեղքերին համար Թողութիւն խոդը բենք, և մեր ընկերների փոքր մեղքերըն ըլթողենք որ նորանք մեզ դէմ մեղանչեցին: Օուր տեղն ենք ողորմութիւն խոդը Աստուածանից, թէ որ մեր ընկերներին և մօտաւորներին ողոքմութիւն չի ցոյց տանք: Պատճառն որ՝ եթէ մեր քիստոնեայ եղբարց վերայ ելած բարկութիւնըն և սրբամտութիւնն մեր սրտերիցն չըհանենք. Աստուած էլ խակի մին ժամանակ իրան սրտիցն չի հանիլ իրան սըրտ-

մոռւթիւնըն և բարկութիւնըն՝ որ
մեր մեղքն մեղ արժանի արաւ. Կո-
րահաց, Պատճառն որ՝ Աստուած էս
պայմանովս մեր մեղքերըն թողեց,
որ մերք էլ ուրիշների մեղքերըն
թողեցք, (աւա... Աստան Ժը) Արժան
չէ ԿԾրիստոնեայ մարդկանց որ ի-
րար հետ խստասիրտ լինին, և իրանց
մօտաւորներին թողութեան անարժան
համարենա ինչու որ՝ թէ և ընկերն
թողութեան անարժան լինի, բոյց
Քրիստոս արժանի է որ Կորան հընա-
զանդվիս և նու ուզումէ որ իրան
սիրյն համար ընկերին էլ արժանի
համարես թողութեան. դու պար-
տական ես ԿԾրիստոնեն՝ որ քո ըն-
կերի մեղքըն թողես: Ահա էլ սկսաք
է մեղ որ միշտ աստուծոյն հնագանդ
լինիք, որ մեղ հրամայեց որ ընկերին
թողութիւն տանք, եթէ կամենանք
մասնակից լիսել էն թողութեանն
որ մեր ՓԵԿԻԾ ԿԾրիստոն իրան, պատ-
ուական արիւն թափելովն մեղ հա-
մար դհեց առաւ Աստուած հօրիցն:
Կակի մին բան էնպէս պատշաճ չէ

Վրիատոսի ծառաներին, որքան գը-
թութիւնն և ողորմութիւնն:

Ապա ուրեմն եկէք բարի կամեցող
քաղցը և սիրելի լինինք իրար հետ
ազօթք աճենք իրար վերայ, որ աստ-
ուած մեր կեալքի ամեն տկարութե-
նիցն առողջացնէ մեզ. (Թէ... ՀՅակ.
Ե.) և էլ երար նեղացնելուցն և ցա-
ւայնելուցն հետացնէ մեզ. որ մին
սիրտ և մին հոգի լինինք, և ինչպէս
աստուծոյ սիրելի որդիք եղբայրական
սիրով և միաբանութենով ի միասին
վարվինք: (Թէ... Լէկէ... Եւ) Առ գոր-
ծովս Աստուծոյն կը շարժենք որ ո-
ղորմած լինի մեր մեղքերին վերայ.
և ոչ մէնակ էաքամն. բայց էլ էս գոր-
ծովս մեր անձներըս պատրաստ կը շի-
նենք որ մեր փրկիչըն և առեղծօղըն
երան առւրբ հաղորդութեան մէջն
ընդունինք մեր հոգոյ յարիտենական
միսիթարութեան և առողջութեան
համար: Ո՞եծ ցնծութիւն և ուրա-
խութիւն է Վրիատոսի համար որ
մատնէ և բնակվի էն հոգոյ մէջ, որ
ոեղ որ սէր և ողորմութիւն են

թագաւորում, և որտեղ որ խաղաղութիւն և միաբանութիւն են տիւլում։ Պատճառն որ՝ սուրբ յօհաննէսըն կապէս է ասում։ թէ աստուածսէր է, և ով որ սիրոյ մէջն է կենում՝ չստուծոյ մէջն է բնակվում։ և աստուած նորանում է բնակվում։
(Տէս. առ. յօհ. դի.)

Արանով գիտացինք սէրըն որ նա իրան անձըն դրաւ մեզ վերայ։ Ա'ենք էլ պէտք է մեր եղբարց վերայ դընենք մեր անձներըս։ (Տէս. առ. յօհ. դի.) Ա'ենք գիտումենք որ մահիցն դէպի կեանքն փոխվեցանք։ պատճառըն որ՝ եղբարներըն սիրումենք։ Ծայց հենց էն առաքեալն էլ ասումի. թէ ով որ չի սիրում եղբօրըն դեռմահի մէջն է բնակվում։ Եմէն ով որ իրան եղբօրն ատումի մարդասպան է. և գիտումէք՝ որ ամէն մարդասպան յաւիտենական կեանքըն չունի հաստատված իրանում։ (Տէս. առ. յօհ. դի.) Աւրեմն նորանք որ եղբարներին անարգումեն՝ յաւիտենական մահի վտանգի մէջ են. և

դատապարտութեան, և սատաճայի որդիք են. և որքան որ իրանց մեղաց մէջն մնան, անիծեալ և ատելի կը-
լինին Աստուծոյ և ամեն երկնաւոր
ընկերութեանն։ Պատճառն որ՝ ինչ-
պէս որ խաղաղութիւնն և սէրն մեղ
ամենակարօղ աստուծոյ օրհնեալ որ-
դիք են. շինում, էնպէս էլ ատելու-
թիւնն և նախանձն մեղ սատաճային
անիծեալ որդիք են շինում։

Աստուծ շնորհք տաց մեզ որ
խաղաղութեանով և սիրով, համբե-
րութեանով և երկայնմտութեանով քը-
րիստոսի օրինակին հետեւինք՝ որ նո-
րան հիմիկ մեր սրտի մէջ ընդունենք
մեղանուժ բնակվելոյ համար, և էս-
պէս հաստատ նշանով յայս ունենանք
որ Քրիստոսի շնորհ քովին մեր ուրա-
խանալի փրկութեանն հասնինք Յաէ
որ Քրիստոսին և Քրիստոսի շը-
նորհըներըն մեղանուժ ուն էնանք. ա-
պա հաստատ է որ նորա ձեռովն մեծ
Աստուծոյ շնորհըն էլ կըստանանք
և կըլայելնք։ Պատճառն որ՝ Դա-
իրան հօր աստուծոյ աջ կողմն հըս-

տու, ԱՌ՝ ԵՆՀԱԼԵՍ մեր միջնորդ և բարեխօս, որ միջնորդութիւն և բարեխօսութիւն է առում մեզ համար մեր ամէն հարկաւոր բաների և ԽԸՆԴ-
ՐՈՒԱՃՔՆԵ րի մէջն: (ՏԵՌ. հաջո. Է) Այս համար թէ որ երկնաւոր շնոր-
հաց և իմաստութեան կարօտ լի-
նինք, թող Քրիստոսի սիրոյ համար
Աստուածանից խնդրենք և նա կըկա-
տարէ մեր խնդրուաճքըն:

Ի՞սպաց հիմիկ եկէք մեր սրտերը
քննենք, և տեսնենք թէ քանի կարօտ
ենք սիրոյ և համբերութեան: Եթէ
մեր սրտերը ցուլս և անյօժաը տես-
նենք մեր պարտականութերին իրանց
մեզքերըն և յանցանքներըն թողե-
լոյ համար. ապա պէտք է կարօտու-
թիւնին և պակասութիւնըն խոստո-
վանինք մեր երկնաւոր հօր առաջին
և նորանից խնդրենք որ թողութիւն
տալոյ յօժարութիւն տայ մեզ: Ի՞սպաց
եթէ յայտնապէս թողութիւն տալոյ
յօժարութիւն չունենանք, և մեր
սրտերումն էլ չըցանկանանք որ էն
մեր սիրոյ կարօտութիւնըն լցնենք,

իրաւին որ մեր վիճակն շատ ահաւոր
 և վատ է աստուծոյ առաջին. և շատ
 պէտք է որ էսպէսի ողորմելի վի-
 ճակի մէջն շատ ջերմեռանդ աղօթք և
 աղաջանք մատուցանենք աստուծոյն, և
 նորանից խնդրենք որ մեղքի հնու-
 թենով ժանդոտված սիրտըն մեղա-
 նից հանէ, և նոր սիրտ դնէ նորա
 տեղն: Պատճառն որ՝ եթէ ուրիշնե-
 րի մեղքըն չըթողենք, Աստուածա-
 նից իսկի թողութիւն չենք գտնիլ
 Այլ ուրիշ մարդկանց աղօթքն և բարի
 գործքերըն չեն կարօղ աստուծոյն մեղ
 հետ հաշտացնել և խաղաղութիւն
 ահել թէ որ մենք մեղանից հաշտու-
 թիւն չունենանք մեր մօտաւորնե-
 րին և ընկերներին հետ: Ե՞ս ո՞չ էլ
 մեր ամէն, արարմունքն և բարի գործ-
 քերըն կարօղ են Աստուծոյն շար-
 ժել որ մեր մեղացն թողութիւն տայ
 մեզ, թէ որ մենք չը՝ կամենանք ու-
 րիշների մեղքըն որտով թողելի: Կա
 ռղորմութիւն է ուզում և ո՞չ թէ մա-
 տագ: Ողորմութիւնն շարժեց մեր փըր
 կէ: Քըրիստոսին որ իրան թշնամիքնե-

ըին համար չարչարմի ապա ու-
րեմն պէտք է մեղ որ նորա օրինա-
կին հետեւինք և նորա սրբութեան
պէս սուրբ Լինինք: Պատճառն որ՝
քիչ օդուտ կը լինի մեղ որ մէնակ
նորա չարչարանքների պառքըն մեծացնենք.
մեր հաւատքըն և յոյսըն և ուրախու-
թիւնըն դնենք փրկութիւն տուօղ
խաչելութեան վերայ. թէ որ սրաի
մէջ փափակ չունենանք որ նորա
չարչարանքի մէջն էլ նորա ցանկա-
լի օրինակին հետեւինք:

Արա համար թէ որ էսպէս ջեր-
մեւադութենով Վրիստոսի մահըն
մտածենք, և թէ որ հաստատ հաւատ-
քով հենց նորա մահի յիշատակըն պա-
հենք և նորա վերայ մեր յոյսըն Դը-
նենք նորա փրկութիւն տուօղ պլ-
տուղներին համար. և թէ որ մեր
միտքըն և վարքըն էնպէս շիտակենք
մեղ և մեր ամեն բաներըն ընկերի
օգտին և մսիթարութեան համար
ընծայենք՝ ինչպէս որ Վրիստոս ի-

բան բոլոր անձըն մեր օգտին և մը-
խիթարութեան համար առւաւ՝ ապա
կարօղ ենք ասել թէ Ճշմարտապէս
տէրի մահըն մտածումենք և ՚Քրիս-
տոսի չարչարանքներին համար միտք
ենք ահում։ Խապէս ՚Քրիստոսի
օրինակին հետեւլով շիտակ նորա
ետեւեն կըգնանք էն տեղն՝ որտեղ որ
նա հիմիկ նստած է հօր և սուրբ
հոգոյ հետ։ որ նորան լինի ամէն
փառք և պատիւ։ Ամէն։

Շուշի բերդումն աւետարանակա.
Ժողովքի տան մէջն էս հետեօդ
գըտանքս էլ ծախվումեն:

1. Ա, ո՞ր էպահութան պարագալ ՞ն վեճութեն:
2. Համապատասխան ծովագութեան:
3. Համապատասխան բարգեցու ՞ն գըտան:
4. Ունեցած գու ՞ն հիմն էպահութան:
5. Համապատասխան ապահութային վեճութեանց գըտան և աշխարհական:
6. Վասնութան ստորը գըտ գըտան:
7. Տեղը այցուք էնական:
8. Լուսաջ ին էպահութան ստղման:
9. Աշե + էպահութանց մին անհանաց մին աշխարհական հարդար հետո. աշխարհ հայան:
10. Լուսաջանի պարագալ էպահութան աշխարհայի պատճառաւ. աշխարհական:
11. Համապատասխան բարգեցութան գըտան էպահութան համապատասխան համապատասխան համապատասխան համապատասխան:
12. Ըստ հաշումար հարցանախներ. աշխարհական:

13. Ճամանակէ վերջնու աշխարհաբանաւու:
14. Արդիշտոսու աղօլութիւնը շաբաթիւն ա-
մին մէկ օքին համար աշխարհաբանաւու:
15. Մեղծէ մէժանալցոն և պօքանալցոն
համար. աշխարհաբանաւու:
16. Մեղծէ ետք անէլոյ բան չէ. աշ-
խարհաբանաւու:
17. Քարտաշնանդ առաջ առօղ մարդի անց
համար. աշխարհաբանաւու:
18. Աւագապանի մշնարաւելունոն և պօ-
չաւելունոն համար. աշխարհաբանաւու:
19. Աւագապանաւելիւն ժըմագանի եւ-
մին համար. աշխարհաբանաւու:
20. Տան և վեց խորածոս ժարապնէն.
աշխարհաբանաւու:
-



